ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Քաղաքացիական ծառայողի անունը, ազգանունը՝ Արմեն Գևորգյան

2. Զբաղեցրած պաշտոնը՝ նախարարի խորհրդական

3. Գործուղման վայրը և ժամկետները՝ Ղազախստանի Հանրապետություն, ք. Ալմաթի 2023 թվականի ապրիլի 11-ից 13-ը:

4. Հրավիրող կողմը՝ ԱՄՀ, Կովկասի, Կենտրոնական Ասիայի և Մոնղոլիայի տարածաշրջանային կարողությունների զարգացման կենտրոն (CCAMTAC)

5. Գործուղման նպատակը՝

Մասնակցել «Հանրային ֆինանսների թվայնացում և թվային հանրային ենթակառուցվածքներ» թեմայով աշխատաժողովին, որը շրջանակներում ներկայացվել են հանրային ֆինանսների կառավարման համակարգի թվայնացման ժամանակակից միտումները, նորարարական մոտեցումները, պետական թվային ենթակառուցվածքները, ՊՖԿ թվային վերափոխումների կառավարման մոտեցումները: Խմբային գործնական աշխատանքի շրջանակներում քննարկվել են մասնակից երկների կողմից աշխատաժողովի ընթացքում ներկայացված թվայնացման գործիքների՝ DPI, GOVTech, Government platform և այլնի կիրառության հնարավորության հարցերը:

6. Քննարկված թեմաները՝

1. Հանրային ֆինանսների թվայնացում. գործընթացն ուղեկցող հիմնական դժվարությունները և մարտահրավերները,
2. Թվային վերափոխման կառավարում. կիբեր վտանգների կառավարում,
3. Պետական թվային ենթակառուցվածքներ (Digital Public infrastructure). հիմնական մոտեցումները և դրանց կիրառությունը
4. Պետական թվային ենթակառուցվածքների կիրառության հնդկական փորձը,
5. Պետական թվային ենթակառուցվածքների ներդրման առաջարկներ. ֆինտեխը ՊՖԿ ոլորտում
6. Մասնակից երկրների հանրային ֆինանսների կառավարման թվայանացման մոդելներ:

7. Հանդիպումները, ելույթները՝

Քննարկումներ են եղել դասընթացի թեմայի շրջանակներում. շնորհանդեսի տեսքով ներկայացվել են մասնակից երկրների՝ Հայաստանի, Վրաստանի, Ադրբեջանի, Ղազախստանի, Մոնգոլիայի, Ղրղզստանի, Ուզբեկստանի, Պակիստանի հանրային

ֆինանսների կառավարման ավտոմատացման գործող համակարգերը: Աշխատաժողովի ընթացքում շնորհադեսի տեսքով (կցվում է) ներկայացվել է ՀՀ ՊՖԿ ոլորտում ներդրված և գործող ավտոմատացման ծրագրերը, ՀՀ կառավարության ֆինանսների կառավարման տեղեկատվական համակարգի (ԿՖԿՏՀ) ներդրման ուղղությամբ իրականացված քայլերը, ձեռքբերումները, ԿՖԿՏՀ ներդրման ընտրված մոդելը և առաջիկա անելիքները, ավտոմատացման ճանապարհին ի հայտ եկած խնդիրները և ռիսկերը:

8. Հանդիպումների ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Այդպիսիք առկա չեն:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Այդպիսիք առկա չեն:

Գործուղվող՝

ՀՀ նախարարի խորհրդական
Արմեն Գևորգյան

(Ստորագրություն)

02 մայիս, 2023թ.